«Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի օգոստոսի 9-ի №911-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« » ——————— 2023 թվականի № -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 9-Ի №911-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի օգոստոսի 9-ի «Հանրային ծառայության առանձին տեսակներով նախատեսված պաշտոնների, դասային կոչումների և աստիճանների համապատասխանությունը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի №1796-Ն և 1797-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» №911-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները՝

1) №1 հավելվածը «Ազգային անվտանգության ծառայության պաշտոններ» սյունյակից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «Պետական պահպանության ծառայության պաշտոններ» սյունյակով.

«

Պետական պահպանության ծառայության պաշտոններ
գլխավոր
ավագ
միջին

կրտսեր

»:

2) №2 հավելվածը «Հակակոռուպցիոն կոմիտեում շնորհվող դասային աստիճաններ» 24-րդ սյունյակից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «Պետական պահպանության ծառայությունում շնորհվող կոչումներ» 25-րդ սյունյակով.

25.
Պետական պահպանության ծառայությունում շնորհվող կոչումներ
գեներալ-լեյտենանտ
գեներալ-մայոր
գնդապետ
փոխգնդապետ
մայոր
կապիտան
ավագ լեյտենանտ
լեյտենանտ
ավագ ենթասպա
ենթասպա

«

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության

վարչապետ Ն. Փաշինյան

2023 թ. ....

Երևան